
**ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ԱՐՏԱՀԱՆՁՄԱՆ ՊԱՅՄԱՆ**

ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆ

Իրավաբանական գրականության մեջ դեռևս բանավիճում են, թե արտահանձնումը իրավունքի որ ճյուղին է պատկանում՝ միջազգային, միջազգային քրեական, սահմանադրական, քրեական, թե քրեադատավարական: Խնդիրն այն է, որ հանցանք կատարած անձանց հանձնելու վերաբերյալ դրույթներ են սահմանված իրավունքի վերոհիշյալ բոլոր ճյուղերում: Այդ դրույթների որոշ մասն ուղղակիորեն կարգավորում է արտահանձնման գործընթացը, մինչդեռ մյուսներն անուղղակիորեն են առնչվում դրան, սակայն էական նշանակություն ունեն այդ գործընթացի համար:

Այսպես, քրեական օրենսգրքի հոդված 5-ը՝ «Օրինականության սկզբունքը», սահմանում է հետևյալը. «Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով»: Հետևաբար, արտահանձնում չի կարող իրականացվել, եթե հայցվող անձի կողմից կատարված արարքը, որը նախատեսված է հայցող երկրի քրեական օրենսդրությամբ, որքան էլ այն հանրորեն վտանգավոր լինի, սահմանված չէ հայցվող երկրի քրեական օրենսգրքով: Բացի այդ, արտահանձնում կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ կատարվել է հանցանք, այլ ոչ թե որևէ այլ բնույթի իրավախախտում: Այս սկզբունքն առավել հայտնի է «երկկողմ հետապնդում» անվամբ: Այն իր արտահայտությունն է գտել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 15-ի 1-ին մասում, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում»: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 487-ի 2-րդ մասն էլ սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ ազատագրկման ձևով՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով»:

Այս դրույթի համաձայն՝ արտահանձնման մասին հայցադիմում ներկայացնելիս այն պետք է պարունակի հայցվող անձի կողմից կատարված

արարքի փաստացի հանգամանքների նկարագրությունը և իրավական որակումը՝ կից տրամադրելով հայցող երկրի համապատասխան օրենքի տեքստը, որի հիման վրա տվյալ արարքը համարվում է հանցագործություն:

Երկկողմ հետապնդման սկզբունքն ամբողջությամբ համապատասխանում է նաև միջազգայնորեն ճանաչված մեկ այլ սկզբունքի՝ «չկա հանցագործություն՝ առանց դրա մասին օրենքում սահմանելու» (nullum crimen sine lege):

Օրինակ՝ եթե մի երկիր հայցում է այնպիսի անձի հանձնումը, որի կատարած արարքն իր օրենսդրությամբ համարվում է հանցագործություն, սակայն այդպիսին չի դիտվում հայցվող երկրի օրենսդրությամբ, ապա վերջինս կարող է հիմնվել այն հանգամանքի վրա, որ տվյալ անձը չի կարող հանձնվել որպես հանցագործ, քանզի այդ անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ (ծերբակալում, կալանավորում) կիրառելու իրավական հիմքեր չկան¹:

Տեսականորեն նույնը կարող է լինել նաև հակառակ պարագայում, երբ հայցվող կողմի օրենսդրությամբ արարքը համարվում է հանցագործություն, իսկ հայցող երկրում՝ ոչ: Գործնականում նման իրավիճակ դժվար է պատկերացնել, քանի որ անձի նկատմամբ հետախուզում կարող է հայտարարվել միայն նրա նկատմամբ հարուցված քրեական գործի առկայության դեպքում, իսկ վերջինս էլ կարող է հարուցվել միայն տվյալ երկրի քր. օր.-ով մախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու համար:

Սակայն իրավաբանական գրականության մեջ քիչ չեն այն տեսակետի կողմնակիցները, ըստ որի՝ արտահանձնման պարագայում երկկողմ հետապնդումն ընդունելի չէ: Այսպես մտածողները որպես հիմնավորում ընդունում են, որ «չկա հանցագործություն առանց օրենքի» սկզբունքը չի տարածվում արտահանձնման վրա, քանի որ այս պարագայում հայցվող երկիրը ոչ միայն պատիժ չի կիրառում հայցվող անձի նկատմամբ, անգամ քրեական պատասխանատվության չի ենթարկում, այլև հանցավորության դեմ պայքարում ընդամենը իրավական օգնություն է ցուցաբերում հայցող երկրին²:

Չնայած այս տեսակետի որոշակի հիմնավորվածությանը՝ կարծում ենք, որ այն սխալ է: Միանշանակ է, որ արտահանձնումը և իրավական օգնության այլ տեսակները՝ վկաների հարցաքննությունը, ինչ-որ փաստաթղթերի կամ իրերի փոխանցումը, էականորեն տարբերվում են: Օրինական հիմքերով տվյալ պետության տարածքում գտնվող անձին առանց իրավական հիմքերի ծերբակալելը կամ կալանավորելը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ խախտում է: Բացի այդ, հնարավոր է, որ արտահանձնումից հետո տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվի քաղաքական, ռասայական, կրոնական և այլ նկատառումներով: Այստեղ հարց է ծագում. նման դեպքերում

¹ Տե՛ս, օրինակ՝ **Бойцов А. И.** Выдача преступников. СПб., 2004, էջ 401:

² Տե՛ս **Волженкин Б. В.** Действие уголовного закона в пространстве и проблемы борьбы с организованной преступностью. Краснодар, 2000, էջ 38-39:

պե՞տք է արդյոք երկրները միմյանց իրավական օգնություն ցուցաբերեն:

Եթե նման հանգամանքներում հայցվող պետությունն իրականացնի արտահանձնում, ապա կդիտվի մյուս պետության կողմից կատարվող հանցանքի կամ հակաիրավական գործունեության «հանցակից»³: Պատահական չէ, որ միջազգային կոնվենցիաներում պաշտպանվում է հետևյալ գաղափարը. եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձին արտահանձնելու միջնորդությունը ներկայացվել է ռասայական, ազգային պատկանելության, քաղաքական հայացքների նկատառումներով նրան հետապնդելու կամ դատապարտելու համար, կամ այդ կերպ անձի վիճակը կարող է վատթարանալ հիշյալ պատճառներից որևէ մեկով, ապա դա չի կարող դիտվել որպես իրավական օգնության պարտավորություն (Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիա, հոդված 8):

Երկկողմ հետապնդումը արտահանձնման կարևորագույն պայմաններից է, քանի որ դրանով է պայմանավորված տարբեր իրավական համակարգերի համատեղելիությունը: Այն հնարավորություն է տալիս անձին մի իրավական համակարգի ընդդատությունից փոխանցելու մեկ ուրիշ իրավական համակարգի ընդդատություն (բնականաբար, խոսք լինել չի կարող մեկ պետության սահմաններում մեկ այլ պետության իրավասության տարածման մասին): Այդ իսկ պատճառով երկկողմ հետապնդումն իր գործնական արտահայտությունն է գտել արտահանձնման մասին երկկողմ, բազմակողմ պայմանագրերում և կոնվենցիաներում: Օրինակ՝ 1957 թվականի «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ում, 2002 թվականի ԱՊԳ երկրների «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի հոդված 56-ի 2-րդ մասում, Ավստրալիայի և Իսրայելի միջև 1961 թվականին կնքված պայմանագրի հոդված 3-ում (համաձայն որի՝ հանձնումն իրականացվում է, եթե Ավստրալիայի օրենսդրությամբ նախատեսվում է պատիժ ազատազրկման ձևով 1 տարուց ավելի ժամկետով, և նախատեսված է Իսրայելի՝ «Հանձնման մասին» օրենքի հանցագործությունների ցուցակում), ինչպես նաև արտահանձնման մասին Օրինակելի պայմանագրում և բազմաթիվ երկրների ազգային օրենսդրություններում:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 15-ի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում»: Թեև այս հոդվածը վերաբերում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող, սակայն Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձանց, այնուամենայնիվ նկատելի է, որ Հայաստանի Հանրապետությանը հասցեագրված արտահանձնման վերաբերյալ խնդրանքը կարող է բավարար-

³ Տե՛ս նաև՝ **Бойцов А. И.**, նշվ. աշխ., էջ 404:

վել միայն այն դեպքում, եթե արարքը պատժելի է երկու երկրների օրենսդրությամբ:

Պետք է հաշվի առնել, որ որոշ երկրների քրեական օրենսդրություններում, օրինակ՝ Ֆրանսիայի 1992 թ. քր. օր.-ում, երկակի հանցավորությունը կիրառվում է ոչ թե հանցագործությունների, այլ հանցագործների նկատմամբ (հոդված 113-6 «Ֆրանսիայի Քրեական օրենքը կիրառվում է ցանկացած հանցագործության նկատմամբ, որը կատարել է Ֆրանսիայի քաղաքացին Ֆրանսիայի տարածքից դուրս: Այն կիրառվում է Ֆրանսիայի տարածքից դուրս իր քաղաքացիների կողմից կատարած այնպիսի արարքների դեպքում, որոնք արարքը կատարված երկրի օրենսդրությամբ պատժելի են»): Նման մոտեցում է ամրագրված նաև Ֆինլանդիայի քրեական օրենսգրքի հոդված 4-ում, ըստ որի՝ այդ երկրի տարածքից դուրս կատարված հանցավոր արարքը Ֆինլանդիայում պատժելի է այն դեպքում, եթե այն հատուկ նախատեսված է օրենքով կամ այլ պետության հետ կնքված պայմանագրով:

Իրավաբանական գրականության մեջ գերակայում է այն տեսակետը, որ երկկողմ հետապնդման համար անհրաժեշտ է, որ համապատասխանի ոչ թե անվանումը, այլ արարքը⁴: Տարբեր երկրներ, ունենալով բազմապիսի իրավական համակարգեր, չեն կարող հանցագործությունները կոչել լիովին միանման անվանումներով: Ավելին, պարտադիր չէ, որ երկրների օրենսդրություններում ամբողջովին համընկնեն հանցագործությունների անվանումները⁵: Օրինակ՝ ՉժՅ-ի և ՌԴ-ի միջև 1995 թվականին կնքված արտահանձնման մասին պայմանագրում նշված է, որ պայմանավորվող կողմերի օրենսդրություններով արարքը հանցագործություն համարելը պարզելու հարցում նշանակություն չունեն ոչ դրա իրավաբանական որակումը, ոչ էլ տերմինաբանական նշանակությունը: Նման մոտեցում ունեն նաև այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան, Կանադան, ԱՄՆ-ը⁶: Հանցագործության անվանման և ձևակերպման համընկնումն էական դերակատարում չունի. կարևորը հանցագործության հատկանիշների համապատասխանությունն է: Այս հանգամանքը չպետք է շփոթել օրենքը համանմանությամբ կիրառելու հետ, ինչն անթույլատրելի է (ՀՀ քր. օր.-ի հոդված 5-ի 2-րդ մաս):

Սակայն կարելի է արդյոք փաստել, որ արտահանձնումը միանշանակ տեղի կունենա այն դեպքում, երբ երկու երկրների օրենսդրություններում համընկնում են հանցավոր արարքի և՛ անվանումը, և՛ հատկանիշները: Օրինակ՝ պետական դավաճանությունը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության դեմ, արդյո՞ք դիտվում է հանցագործություն այն երկրում, որի օգտին կատարվել է դավաճանությունը՝ չնայած այդ երկրի օրենսդրությամբ ևս պետական դավաճանության համար պատասխանատվություն է սահմանված: Կամ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը գրեթե բոլոր երկրներում պատժելի է, սակայն մի նյութ մեր երկրում թմրամիջոց է համարվում, իսկ մեկ ուրիշում՝ ոչ:

Նշված օրինակներում հնարավոր է, որ հանցավոր արարքների թե՛

⁴ Տե՛ս Գаленская Л. Н. Международная борьба с преступностью. М., 1972, էջ 128:

⁵ Տե՛ս Կոմարովա Ю. В. Принципы института выдачи в международном праве. М., 2002, էջ 11:

⁶ Տե՛ս Բойцов А. И., նշվ. աշխ., էջ 418:

անվանումները և թե՛ հատկանիշները նույնը լինեն, և տեսականորեն արտահանձնման միջնորդությունը պետք է բավարարվի: Եթե առաջին օրինակի պարագայում որևէ իրավական խնդիր չի կարող ծագել արտահանձնման համար (խնդիրը միայն գործնական հարթությունում է, որովհետև հայցվող երկիրը ամեն կերպ կխուսափի արտահանձնումից՝ իր շահերից ելնելով), ապա երկրորդ օրինակի պարագայում հանցավոր արարքի հատկանիշները միայն արտաքինից են համընկնում: Եթե մի երկրում որևէ թմրամիջոցի ապօրինի շրջանառությունը քրեորեն պատժելի արարք չի համարվում, այսինքն՝ տվյալ արարքում հանցակազմ չկա, ապա երկկողմ հետապնդման հանգամանքը ևս բացակայում է, և արտահանձնման մասին խոսք լինել չի կարող:

Երկկողմ հետապնդման հանգամանքը պարզելու նպատակով պետք է պարզաբանել նաև, թե արարքը օրենսդրությամբ երբ է դիտվել հանցագործություն՝ հանցագործության կատարման, թե հանձնման վերաբերյալ հայցադիմումը ստանալու պահին, քանի որ դրանց միջև եղած ժամանակահատվածը կարող է բավականին երկար տևել, որի ընթացքում կարող են լինել օրենսդրական փոփոխություններ: Այստեղ խոսքը արտահանձնման պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր երկրների մասին է՝ թե՛ հայցող և թե՛ հայցվող:

Մեր կարծիքով, եթե արարքը դրա կատարման պահին համարվել է հանցագործություն հայցող երկրի օրենսդրությամբ, իսկ հետագայում ապաքրեականացվել է, ապա անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի: Չի կարող քննարկվել այն իրավիճակը, երբ հայցող երկրում արարքը քրեականացվել է դրա կատարումից հետո (հաշվի առնելով օրենքի հետադարձ ուժի կիրառման անթույլատրելիությունը):

Եթե հայցվող երկրում արարքը կատարման պահին համարվել է հանցագործություն, իսկ հայցադիմումը ստանալու պահին ապաքրեականացվել է, ապա այն չի դիտվում երկկողմ հետապնդման կանոնների շրջանակում, հետևաբար անձի նկատմամբ որևէ հարկադրանքի միջոց (ձերբակալում, կալանավորում) չի կարող կիրառվել, ինչպես նաև անձը չի կարող արտահանձնվել: Արտահանձնման համար կարևոր նախապայման է, որ արարքը դիտվի հանցագործություն թե՛ դրա կատարման և թե՛ արտահանձնման մասին հայցադիմում ստանալու պահին:

Այդուհանդերձ, չի բացառվում, որ այս դեպքում ևս արտահանձնման մասին հայցադիմումը մերժվի՝ հաշվի առնելով օրենքի հետադարձ ուժի մասին դրույթը. մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 13-ի կետ 2-ի կիրառումը, համաձայն որի՝ «արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե օրենքի հետադարձ ուժը կարո՞ղ է արդյոք կիրառվել այն դեպքերում, երբ արտահանձնման պայմանագիր կնքվել է հանցագործությունից հետո, ապա նկատենք, որ թեև սա կարող է դիտվել որպես հանցանք կատարած անձի վիճակը վատթարացնող, բայց ևայնպես արտահանձնման վերաբերյալ միջազգային պայմանագրե-

րի հետադարձ ուժը չի կարող նույնական լինել արարքի հանցավորությունը սահմանող օրենքի հետադարձ ուժին, քանի որ արտահանձնումը ոչ թե պատիժ է, այլև իրավական օգնություն, որի միջոցով հնարավոր է կիրառել պատիժ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ չէ յուրաքանչյուր արտահանձնման հայցադիմումի դեպքում պարզաբանել հանցանքը կատարելու և այդ արարքը քրեականացնող օրենքի ընդունման ժամանակահատվածները: Որոշ պայմանագրեր կարող են ունենալ «հեռանկարային» բնույթ, այսինքն՝ կարող են ուժի մեջ մտնել միայն որոշ ժամանակ անցնելուց հետո, որոշ մասը կարող է տարածվել մինչ դրա ուժի մեջ մտնելը կատարված արարքների կամ քրեաիրավական հարաբերությունների վրա, իսկ մյուսներն էլ կարող են ունենալ երկակի բնույթ՝ տարածվել թե՛ նախկինում, թե՛ ապագայում կատարվող արարքների վրա:

Գործնականում հայտնի են դեպքեր, երբ արտահանձնումն իրականացվել է հանցագործությունից հետո ստորագրված կամ ուժի մեջ մտած պայմանագրի հիման վրա: Նման դրույթ սահմանվել է դեռևս Օքսֆորդի բանաձևում, ըստ որի՝ արտահանձնման մասին օրենքը կամ պայմանագիրը կարող է կիրառվել մինչ դրա ուժի մեջ մտնելը կատարված հանցանքների նկատմամբ (հոդված 17): Իսկ 1993 թ. «Իրավական օգնության մասին» Միասկի կոնվենցիայի հոդված 85-ի համաձայն՝ այն տարածվում էր նաև նախքան Կոնվենցիան ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների վրա:

Ավելին, միջազգային քրեական տրիբունալները հատուկ ստեղծվում են՝ քննելու այն գործերը, որոնք կատարվել են մինչ այդ: Մասնավորապես՝ Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային տրիբունալները, որոնք համապատասխանաբար ստեղծվել են 1945 թվականի օգոստոսի 8-ին և 1946 թվականի հունվարի 19-ին, նախատեսված էին Երկրորդ համաշխարհային պատերազմի զլխավոր ռազմական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար:

Նախկին Հարավսլավիայի հարցով միջազգային տրիբունալը ստեղծվել է 1993 թվականին՝ 1991 թվականից կատարված հանցագործությունների քննության համար, իսկ Ռուանդայի հարցով միջազգային տրիբունալը՝ 1994 թվականի նոյեմբերի 8-ին՝ 1994 թվականի հունվարի 1-ից մինչև 1994 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարված հանցագործությունների քննության նպատակով: Հետևաբար, այդ տրիբունալներին անձանց փոխանցելու մասին դրույթներն ունեն հետադարձ ուժ:

Դրան հակառակ՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնակարգի համաձայն՝ Դատարանի իրավասությունը տարածվում է միայն այն հանցագործությունների վրա, որոնք կատարվել են Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո: Եթե որևէ պետություն Կանոնակարգին անդամակցում է դրա ուժի մեջ մտնելուց հետո, ապա Դատարանը կարող է իր իրավասությունը տարածել այդ երկրի համար Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունների վրա (հոդված 11): Միաժամանակ, հոդված 24-ով արգելվում է Կանոնակարգը հետադարձ ուժով կիրառելը:

Չի բացառվում, որ քրեական օրենսդրությունը փոփոխվի այն պահին, երբ իրականացվում է արտահանձնված անձի դատական քննությունը: Այս հանգամանքը հստակ սահմանված է Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայում, որի հոդված 14-ի 3-րդ կետում ասվում է. «երբ հանցագործության նկարագրությունը, որի համար ներկայացվել է մեղադրանք, փոխվում է դատավարության ընթացքում, հանձնված անձի նկատմամբ պետք է մեղադրանք առաջադրվի կամ դատավճիռ կայացվի այն չափով, որքանով տվյալ հանցագործության կապակցությամբ՝ իր նոր նկարագրությամբ և բաղադրատարրերով, հանձնումը կիրառելի է»:

Այլ է իրադրությունը, երբ բուն հանցագործության հասկացությունը, ինչպես նաև հանցակազմի հատկանիշները և հետևաբար՝ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի մեկնաբանությունը տարբեր իրավական համակարգերում տարբեր են:

Գործնականում արտահանձնման դեպքում երկու տարբեր համակարգերում հանցակազմի փաստացի հատկանիշների տարբերությունը հնարավոր է համապատասխանեցնել մյուսի տեսական հատկանիշներին: Որպես օրինակ բերենք Գերմանիայի 1982 թ. «Քրեական գործերով միջազգային օգնության մասին» օրենքը, որի դրույթներին համապատասխան՝ արտահանձնումը կարող է իրականացվել ոչ միայն այն դեպքում, երբ արարքը պարունակում է հատկանիշներ Գերմանիայի օրենսդրությամբ քրեական պատասխանատվության ենթարկելու համար, այլև այն դեպքերում, երբ փաստերի նույնաբովանդակ փոփոխության դեպքում այն կհամապատասխանի Գերմանիայի օրենսդրությամբ սահմանված հանցակազմի հատկանիշներին⁷:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 487-ի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետության և Հայաստանի Հանրապետության օրենքներով համարվում են պատժելի»: Այս առումով, նախ, կարծում ենք, որ «օրենքներով» եզրույթը պետք է փոխարինել «քրեական օրենսդրությամբ» եզրույթով, քանի որ արտահանձնում կարող է իրականացվել միայն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի՝ հանցանքի կատարման համար, ինչը սահմանված է ՀՀ թե՛ քրեական և թե՛ քրեադատավարական օրենսդրությամբ: Բացի այդ, Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված վերոհիշյալ սահմանումն ավելի լայն հնարավորություն է ընձեռում արարքին ՀՀ օրենսդրությամբ համապատասխան որակում տալու համար, ուստի կարծում ենք, որ Գերմանիայի օրենսդրության այդ ձևակերպումը կարելի է կիրառելի դարձնել նաև մեր քր. դատ. օր.-ով:

Երկրորդ հետապնդման հանգամանքը լայն առումով մեկնաբանելու համար բավարար չէ միայն հանցակազմի հատկանիշների համապատասխանելիությունը: Անհրաժեշտ է նաև ուսումնասիրել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների առկայությունը՝ անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն և այլ: Սակայն հիշյալ հանգամանքների առկայությունը հնարավոր է պարզել միայն դատական քննությամբ:

⁷ См.у Минкова Ю. В., цзл. աշխ., էջ 18:

Հարկ է նշել, որ երկկողմ հետապնդման բոլոր հատկանիշների առկայությունը պարզելու համար աննպատակահարմար է հայցող կողմից պահանջել անձի կատարած արարքի հանցավորությունն ապացուցող ամբողջական ապացույցներ, քանի որ նախ՝ այն բավականին ժամանակատար է, երկրորդ՝ նույնիսկ քրեական գործը տրամադրելու և ուսումնասիրելու դեպքում դրանք բավարար չեն լինի ամբողջական դատական քննություն իրականացնելու համար (անհրաժեշտ է նաև այլ գործողությունների կատարում, ինչպես, օրինակ, վկաների հարցաքննություն և այլն), և ի վերջո՝ այդ դեպքում հայցվող երկրի դատարանը իր վրա կվերցնի հայցող երկրի դատարանի գործառույթները: Նույնիսկ ԱՄՆ-ում, որտեղ արտահանձնման համար պարտադիր են դատական լսումները, դատարանները հրաժարվում են իրենք որոշել հանձնման ենթակա անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության հարցը՝ օգտվելով այն հանգամանքից, որ արտահանձնման մասին պայմանագրերում նախատեսված չէ մեղքն ապացուցող փաստաթղթերի տրամադրումը⁸ (նման մոտեցում կա նաև Հայաստանի Հանրապետությունում, և համաձայն քրեական դատավարության օրենսգրքի հոդված 479-ի 6-րդ կետի՝ «դատաքննության ընթացքում դատարանը չի քննարկում բողոքը բերած անձի մեղավորության հարցը՝ սահմանափակվելով միայն հանձնման թույլտվության վերաբերյալ կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշման՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխանության հարցի ստուգմամբ»):

Բլանկետային նորմերի երկկողմ հետապնդման առումով անհրաժեշտ է ընդգծել ֆինանսական բնույթի հանցագործություններին վերաբերող հարցերը, քանի որ ամենից շատ խնդիրներ են ծագում հենց այս հանցագործությունների դեպքում: Այսպես, «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի սկզբնական տարբերակի հոդված 5-ում նշվում էր, որ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի և փոխանակման հետ կապված հանցագործությունների համար հանձնումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե «պայմանավորվող կողմերը նման որոշում կայացրել են ցանկացած այդպիսի հանցագործության կամ հանցագործությունների կատեգորիայի վերաբերյալ»: Սակայն հետագայում՝ երկրորդ լրացուցիչ արձանագրությունն ընդունելու հետևանքով, հոդված 5-ը ստացավ հետևյալ ձևակերպումը՝ «Հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի և փոխանակման հետ կապված հանցագործությունների դեպքում Պայմանավորվող կողմերի միջև հանձնում տեղի է ունենում համաձայն Կոնվենցիայի դրույթների, եթե հանցագործությունը, հայցվող Կողմի օրենսդրության համաձայն, համապատասխանում է նույնաբնույթ հանցագործությանը»: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Հանձնումը չի կարող մերժվել այն հիմքով, որ Հայցվող կողմի օրենսդրությամբ չեն սահմանված նույնաբնույթ հարկեր կամ տուրքեր, կամ չի նախատեսվում հարկի, տուրքի, մաքսատուրքի և փոխանակման նույնաբնույթ կարգավորում, ինչը նախատեսվում է Հայցող կողմի օրենսդրությամբ»:

⁸ Տե՛ս, օրինակ՝ **Фисенко И. В.** Борьба с международными преступлениями в международном уголовном праве. Минск, 2000, էջ 100:

Նմանատիպ մոտեցում է դրված նաև արտահանձնման մասին «Օրինակելի պայմանագրի» հիմքում, ըստ որի՝ «եթե անձի արտահանձնումը հայցվում է հարկերի, մաքսատուրքերի, փոխանակման կամ եկամուտների հետ կապված այլ հարցերի վերաբերյալ օրենքը խախտելու համար, ապա արտահանձնումը չի կարող մերժվել այն հիմքով, որ հայցվող երկրի օրենսդրությամբ նախատեսված չէ նույնատիպ հարկ, կամ սահմանված չեն հարկերի, մաքսատուրքերի կամ փոխանակման հայցող երկրի նույնօրինակ դրույթներ»: Նկատենք՝ այստեղ կա վերապահում. որոշ երկրներ կարող են չնախատեսել այս կետը կամ այն դիտել որպես մերժման ոչ պարտադիր հիմք (հոդված 2-ի 3-րդ կետ):

Կարծում ենք, որ Եվրոպական կոնվենցիայի մոտեցումն այս հարցի վերաբերյալ առավել ընդունելի է, քանի որ տարբեր երկրներ յուրովի են մոտենում իրենց հարկային դաշտին, և ակնկալել, որ բոլոր երկրներում միևնույն և նույնաչափ հարկատեսակներ են գործում, անհնար է: Հետևաբար, այստեղ հարկի տեսակը որևէ նշանակություն չպետք է ունենա, և այն հանգամանքը, որ հայցվող երկրի օրենսդրությամբ նույնատիպ հարկատեսակ նախատեսված չէ, չպետք է արտահանձնումը մերժելու հիմք լինի, քանի որ, ըստ էության, արարքն ուղղված է ոչ թե կոնկրետ հարկից, այլ ընդհանրապես հարկերից խուսափելուն:

Արտահանձնման դեպքում երկկողմ հետապնդման հետ կապված խնդիրներ կարող են առաջանալ նաև հանցակիցների և հանցավոր մտադրությունն ավարտին չհասցրած անձանց հանձնելու պարագայում:

Հանցակազմի բոլոր հատկանիշները պարունակող չավարտված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հիմքերն ամբողջովին նույնն են, ինչ ավարտված հանրորեն վտանգավոր արարքին: Այս առումով պատասխանատվությունը հանցափորձի կամ չավարտված հանցագործության համար չի հակասում ո՛չ քրեական օրենսգրքի հոդված 3-ով սահմանված քրեական պատասխանատվության հիմքերի դրույթներին, ո՛չ էլ հոդված 18-ին, որը սահմանում է հանցագործության հասկացությունը:

Այս հանգամանքը բխում է նաև միջազգային փաստաթղթերից, որոնցում որպես քրեական հետապնդման փաստացի հիմնավորում դիտվում են ոչ միայն ավարտված, այլև չավարտված հանցագործությունը, ինչպես նաև՝ դրան հանցակցելը: Այսպես՝ համաձայն Ցեղասպանության մասին կոնվենցիայի՝ պատժելի են համարվում ոչ միայն բուն ցեղասպանությունը, այլև դրա իրականացման համար դավադրությունը, ուղղակի և զանգվածային դրդիչ գործողությունները, կատարման փորձը և ցեղասպանության հանցակցությունը (հոդված 3): Համաձայն Օդանավերի ապօրինի առևանգման մասին կոնվենցիայի հոդված 1-ի՝ անձը, որը ապօրինաբար, բռնություն գործադրելու կամ այլ սպառնալիքի միջոցով առևանգում է օդանավը կամ վերահսկողություն է սահմանում դրա նկատմամբ կամ փորձում է կատարել նման արարք կամ այն անձի հանցակիցն է, որը կատարում կամ փորձում է կատարել նման արարք, կատարում է հանցագործություն:

Հանցավոր արարքի հիշյալ բոլոր փուլերը, եթե նույնիսկ իրենց հան-

րորեն վտանգավորության աստիճանով հավասար չեն, ապա քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության առումով լիովին բավարար են:

Վերը նշվածն անմիջականորեն առնչվում է նաև միջազգային հանցագործություններին: Այսպես՝ համաձայն Հռոմի կանոնադրության հոդված 25-ի՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործություն կատարելու համար, եթե՝

1) հանցագործությունը կատարում է միանձնյա, մեկ այլ անձի հետ կամ այլ անձի միջոցով՝ անկախ այն հանգամանքից, թե այդ այլ անձը ենթակա է քրեական պատասխանատվության, թե ոչ,

2) հրամայում, դրդում կամ հանդուրժում է կատարել հանցագործություն, եթե այդ հանցագործությունը կատարվել է, կամ փորձ է եղել այն կատարելու,

3) հանցագործությունը հեշտացնելու համար օժանդակել կամ ինչ-որ այլ կերպ օգնել է դրա կատարմանը կամ փորձին, այդ թվում՝ կատարման համար միջոցներ տրամադրելով,

4) ընդհանուր նպատակներից ելնելով՝ ցանկացած այլ կերպ օժանդակել է խմբի կողմից հանցագործության կատարմանը կամ դրա փորձին,

5) ցեղասպանության դեպքում ուղղակիորեն և հրապարակայնորեն դրդել է ուրիշներին կատարելու այն,

6) փորձել է կատարել հանցանք՝ ձեռնարկելով գործողություններ, որոնք իրենցից էական քայլ են ներկայացնում դրա իրականացման համար, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվում՝ անկախ այդ անձի կանքից:

Միաժամանակ, ազգային օրենսդրությունում միջազգային հանցագործությունների վերաբերյալ նորմերի բացակայությունը չի կարող այդ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց Միջազգային դատարանին կամ տրիբունալին փոխանցելու արգելք լինել, քանի որ միջազգային իրավունքի Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրությամբ՝ «այն հանգամանքը, որ ներքին օրենսդրությամբ պատիժ սահմանված չէ միջազգային իրավունքով հանցագործություն համարվող արարքի համար, այդ հանցագործությունը կատարած անձին չի ազատում պատասխանատվությունից միջազգային իրավունքի համաձայն» (սկզբունք 2): Թեև, հաշվի առնելով Միջազգային դատարանի ընդդատյա հանցագործությունների ծանրության աստիճանը, քիչ հավանական է, որ այդ արարքները նախատեսված չլինեն պետությունների ազգային օրենսդրություններում, և երկկողմ հետապնդման պայմանը չապահովվի: Այդուհանդերձ, կարելի է փաստել, որ արտահանձնման համար, հատկապես՝ առանձնապես ծանր և ծանր հանցանք կատարած անձանց դեպքում, երկկողմ հետապնդման պայմանին հետզհետե երկրորդական տեղ է հատկացվում: Օրինակ՝ Եվրոպական կալանքի սանկցիայի և Եվրոպական միության անդամ երկրների միջև անձանց փոխանցման մասին Եվրոպայի խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի 2002/584/JHA որոշման հոդված 2-ի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցող երկրի օրենսդրությամբ հոդվածում թվարկված հանցատեսակների

համար նախատեսված է պատիժ՝ ազատազրկման ձևով, առնվազն երեք տարի ժամկետով, ապա անհրաժեշտ է իրականացնել անձի փոխանցումը հայցող երկրին՝ առանց երկկողմ հետապնդման հանգամանքը պարզաբանելու: Այդ հանցատեսակների թվին են դասվում ինչպես ահաբեկչությունը, մարդկանց առևտուրը, այնպես էլ խարդախությունը, շորթումը և այլն: Մնացած դեպքերում փոխանցումը կարող է իրականացվել երկկողմ հետապնդման պայմանի առկայության դեպքում:

Այսպիսով, անհրաժեշտ է փաստել, որ, թեպետ միջազգային իրավական համակարգն իր զարգացումն ապրելով՝ որոշակի փոփոխությունների է ենթարկվում, այդուհանդերձ երկկողմ հետապնդման հանգամանքը շարունակում է մնալ պարտադիր պայման անձանց արտահանձնման գործընթացն իրականացնելիս:

Բանալի բառեր – *երկկողմանի հետապնդում, արտահանձնում (էքստրադիցիա), քրեական օրենսգիրք, հանցավոր արարք*

АРА ФИДАНИЯН – *Двойная инкриминация деяния как условие выдачи лиц, совершивших преступление.* – В статье исследуется сущность двойной инкриминации преступности и ее связь с процессом выдачи, а также возникающие при этом проблемы и подходы к ним в разных странах.

В статье также предложены возможные решения названных проблем.

Ключевые слова: *двойная инкриминация, выдача (экстрадиция), уголовный кодекс, преступное деяние*

ARA FIDANYAN – *The Dual Incrimination as a Precondition for the Extradition of Crime Perpetrators.* – The dual incrimination issue as a precondition for the extradition of crime perpetrators is discussed in the article presented. The author analyses the nature of dual incrimination, its relation to the process of extradition, the problematic issues emerging in that process, as well as presents approaches of different countries when dealing with the mentioned issue.

Based on the study conducted, the author suggests possible solutions and options for overcoming the highlighted issues in regard to extradition in the Republic of Armenia.

Key words: *dual incrimination, extradition, criminal code, crime*